



Միսաք Մեծարեւնց

Ուրիներու շուքին տակ

Ա

Ուռնհինէ՛ր, լացէ՛ք, լացէ՛ք անդադրում
Արտասուքնիդ շիթ շիթ հոգիս կ'արծաթէ.
Ես կը փարիմ մենիկ պահին այս տրտում՝
Ուր ձեր հեղուկ նըւագն յուշիկ կը կաթէ:

Ծաղիկներուն գօտին դեղին, լայնարձակ
Արօտներու գիւմրիւթ իրանն երբ գրկէ,
Ու միջօրի արեւն ալ՝ խուրձ ու տրցակ
Շողերն իր՝ բիւ Ժապավէնով մը պրկէ,

Կուգան կոյսերն իմ անուրջիս, հերարձակ,
Մանիշակէ բըլուրներէն ու դաշտէն,
Ես կ'ունկնդրեմ հապըշտապ ու համարձակ
Քայլերուն՝ որ լուռն ուժգնօրէն կը շեշտեն:

Ու կը պարե՛ն. իրենց նագանքն հարսենի
Ու նայուածքնին քօղքած կազի մըշուշով,
Իրենց վարսքին հետ կը խաղայ սիւզ մը գով
Եւ այտերնին կակաջի պէս կը շիկնի:

Իրենց մարմինն՝ ակնվանի թափանցիկ.

Իրենց հոգին՝ համբոյր համակ ու շուշան,
Իրենց սիրտը՝ հուր շրջնուիկ ու բաղձիկ,
Իրենց ծիծաղն՝ արշալոյս սը ջինջ գարնան:

Բ

Ուռենիներ, արտասուեցէ՛ք տրտմագին
Գորովակաթ արցունքը ձեր արծաթէ.
Քաղցր է ինծի գեղումն այդ ձեր թախծանքին՝
Որ տրտմանոյ՝ կայլակներով կը կաթէ:

Տիւանդորին համբուն՝ Ժամերն են ոսկի,
Ձեր սաղարթին գորշ ու տարփոտ շուքին տակ՝
Ուր բուրնունքը կուգայ ծաղիկ ու հասկի
Եւ կը հնչէ յուշերուս ծափը խայտակ:

Ուր մերթ ձայնն ալ թմբկիկներուն հեռաւոր,
Ու ծիծաղը բամբիռներուն արծաթի,
Ու գնջուիի երգիչներու տարփաւոր
Միրերգներուն արձագանգն ալ կը ցաթի:

Ու երբ դարձեալ հովիտն համակ ընդգրկէ
Անդաստանին վայրի Լուռը թեւաւոր,
Ու երբ ծառուտքն ալ արբեցած խոնջէնքէ
Անշարժանայ իր խոկին մէջ մենաւոր:

Արագիւ մը կ'անցնի յանկարծ անվրդով,
Ցուցադրելով կարմիրն իրեն կտուցին
Ու կը տաքնայ մէջն արեւին հուր ցանցին,
Ու կը ցանէ հոս հոն կափկափն իր թոթով:

Գ

Ուռնին՝ շիթ շիթ արցունք ցոլեցէք,
Մինչ բուրմունքնիդ իմ հոգւոյս մէջ կ'ամպանայ,
Եւ այս չքնաղ անդորրութեան յեց՝ թող հէք
Երազանքս պահիկ մը գէթ հեշտանայ,

Եւ երբ իջնէ լեռնէն հովիկն իրիկուան,
Ու սրսըփայ թախծոտ օրհներգը սօսին.
Երբոր ցայտքերն աւազանին մէջ հոսին
Ու ձեր շուքին տակ թռչնիկներ թռլրոան.

Ու երբ արեւն ալ քրքմաներկ վրձինով
Ոսկեգօծէ սրգատամուկ ձեր հոգին,
Երբ համբոյրի պէս փաթթւի ձեր շոգին
Անոր ցոլքին՝ եղկ, տարփագին ու գինով.

Միշտ, յամրագին կաթկըթեցէք դուք նորէն
Արծաթելու համար խորհուրդն անպարփակ
Որ շուքէ շուք կը թռչըտի լայնօրէն
Ընդգրկելով ամէն դալար շրջափակ:

Ու երբ ցայգն ալ ծառաստանին մէջ սահի
Մեւ մագիլով ձեր ջինջ հոգին ճանկելու,
Լացէ՛ք նորէն, դուք համակերպ ու հրլու
Դողդըղագին ձեր տազնապին մէջ ահի: